

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԵՎԱԶԵՑՄԱՆ ԱՅԲՈՒՔԵՆ

«ԱՌՆ» կոչվող երկկողմ քարտերի այս հավաքածուն կազմված է հետևյալ սկզբունքով: Քարտերի մի կողմում հայերենի այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխան ընտրված և պատկերված է գործիք կամ սարք (գրված է նաև տառը և համապատասխան բառը), որն օգտագործվում է աղետների ռիսկերի նվազեցման փրկարարական կամ վտանգների կանխարգելման նպատակներով: Քարտերի հակառակ կողմում պատկերված է տվյալ գործիքի կամ սարքի կիրառության որևէ դրվագ:

Քարտերի այս հավաքածուի կիրառման համար առաջարկելով մի քանի տարբերակ՝ ուզում ենք հուշել, որ դուք կարող եք Ձեր (կամ երեխաների) մշակած առաջադրանքներն առաջարկել Ձեր սաներին:

1. «Հարց ու պատասխան»

Ուսուցիչը բարձրացնում է մեկական քարտ և հարցեր է տալիս.

- Ի՞նչ է այս գործիքի անունը: Տառը քեզ կհուշի
- Ի՞նչ են անում այս գործիքով (ցուցադրվում է քարտի հակառակ երեսը):
- Ուրիշ դեպքեր գիտե՞ք, երբ օգտագործում են այս գործիքը:

2. «Գուշակիր գործիքի անունը»

Ուսուցիչը ցուցադրում է կամայական քարտի գործողություն պատկերող կողմը և հարցեր է տալիս.

- Ի՞նչ է այս պատկերում օգտագործվող գործիքի անունը:
- Ի՞նչ տառով է սկսվում այդ գործիքի անունը:

3. «Ինչպե՞ս են օգտագործում այս գործիքը»

Ուսուցիչը ցուցադրում է կամայական քարտի տառը, գործիքը պատկերող երեսը և հարցեր է տալիս.

- Ի՞նչ գործիք է պատկերված:
- Ե՞րբ են օգտագործում այդ գործիքը:

Ուսուցիչն առաջարկում է ուսումնասիրել դասասենյակ բերված գործիքների ընտրանին և բացատրել ու ցուցադրել դրանց օգտագործման ձևերն ու կանոնները:

4. «Մնջախաղ»

Երեխաները խաղավարից ստանում են մեկական քարտ և փորձում են մնջախաղի միջոցով ներկայացնել այնտեղ պատկերված գործողությունը: Խումբը փորձում է գուշակել, թե ի՞նչ փրկարարական գործողության կամ գործիքի մասին է խոսքը: Խաղալ կարելի է նաև մրցակցային թիմերով:

5. «Քինգո»

Երեխաները ստանում են երեքական (4,5,6-ըստ մասնակիցների թվի) քարտ: Խաղավարը ներկայացնում է փրկարարական որևէ գործողություն, որն ընդգրկված է քարտարանում: Խումբն անվանում է համապատասխան փրկարարական գործիքը: Այն երեխան, ով իրեն բաժին ընկած քարտերի մեջ ունի այդ գործիքը, շրջում է տվյալ քարտը: Ով առաջինը կարողանում է շրջել իր մոտ եղած բոլոր քարտերը, բացականչում է «քինգո» և համարվում է հաղթող: Խաղալ կարելի է նաև թիմերով և մրցակցային: